լով, բարկանալով, քաղցանալով, յագենալով, տկարանալով և մահուամբ մեռանալով, որպէս ամենայն բնութիւն մարդոյ և որպէս բոլոր հնազանդեցեալք ժողովուրդքն իւր, նա ևս հնազանդեցեալք ժողովուրդքն միևնոյն որպէս թագաւորս իւրեանց, զի ամենեքեան համահաւասար խաբեցան. ուրեմն սա ոչ է թագաւոր ի վերայ բանական բնութեան մարդոյ եթէ ոչ իբր հովիւ 'ի վերայ անբանից կենդանեաց, այլ նոքայ որ թագաւորեն 'ի վերայ ժողովրդեան իւրեանց ըստ Օրինօք և կարգաւ յօրինաց ստացան պատիւ 'ի ժողովրդենէ անուանեալ իւրեանց թագաւոր, այլ սոքայ բարեպաշտք թագաւորքս պահելոյ Շարն կառավարութեան, թայլ եռուն ժողովրդոց այս անուանակոչութիւն թագաւորի, այլ յինքեանք բարեպէս ծանեան, զի ոչ կարեն մաղ մի 'ի գլխոց ժողովրդոց իւրեանց թուխ առնել և կամ սպիտակ, և ծանեան զինքեանց իշխան 'ի վերայ յաշխարհին իւրեանց, զի իշխեսցեն ըստ Օրինօք 'ի վերայ ամենայն գործոց ձեռաց ժողովրդոց իւրոց, զի ամենայն գործ ձեռաց ամենայն արանց 'ի ձեռանէ այս յիշխանէ և թագաւորէ գտցի վարձս իւր ըստ Օրինօք, վասն այս և այլ բազում նման սորա պատճառի՝ մի թոյլ տայք զի լիցի ոք ինքնակալ ոմն բարբառոսաբար թագաւոր 'ի վերայ ժողովրդեան Հայոց, և 'ի երկրին մերոյ Հայաստանեայց, և աղաւնայկենցաղ